

Օ. Տ. 1. 8. 9  
32  
9/1

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԱՐԴՅՈՒՆԻՆԻ ԵՒ ՆԵՐԿԱՅ ՊԱՏԵՐԾՎՈՄԻ ԸՆՑԱՔԵՐԻ ՄԸՆԿԵՐԻՆ

Յ Օ Ր Ի Ն Ե Ց

Արդումինցի ՅՈՎՀ. ՊԵՏՈՑԵԱՆ


Զուտ արդիւնքը յատկացվում է պատերազմից զիասւած  
Հայ ժողովրդին:



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՄԵՍ» Գրաֆիկայա փող. № 6.


1915



891.99-192  
10 NOV 2011  
Հ ԱՐՄ. Դ-49  
ՀԱ. 632  
Հ 2-50882  
Հ 2-50882

# ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԸՐԳՈՒԹՅՈՒՆԻ ԵՒ ՆԵՐԿԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹՔԵՐԻ ՄԸՆԻՆ



Յ Օ Ր Ի Ն Ե Ց

Արդուինցի ՅՈՎՀ, ՊԵՏՈՅԵԱՆ

Զուտ արդիւնքը յատկացվում է պատերազմից վնասւած  
Հայ ժողովրդին:

ՀԿԲ. № 20900

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՄԵՍ» Գրաֆուկայա փող. № 6.

1915

18.09.2013

73148

# УРАЛСИББАНК

Экспо 96

Антверпенъ 1906  
бог. Серебрянная



Фирма сущ.

Золотой крестъ GRAND PRIX.



Парижъ 1908 года  
большая Золотая



съ 1895 г.

Паровой Кожевенные заводъ

# О. П. ПЕТОЯНЦЪ

Мартиновская ул. соб. домъ № 7.



39936-67

ԵՐԳԱ

Արդուինցոց փախուստը

Հազար ութը հարիւր եօթանասունը եօթին  
Ռուսաց բանակը հասաւ Արդուին,  
Թրքաց լծից աղատած էր հայերին.  
Տէրը ողորմած է, մի վախէք, հայեր:  
Թուրքը ինկաւ Գերմանիայի թաթումը,  
Հաւատացրեց՝ ետ պիտի առնէ Բաթումը,  
Օսմանացիի գորքը մօտ էր Արդուինին.  
Տէրը ողորմած է, մի վախէք, հայեր:  
Ռուսաց զօրքը պատրաստ էր նահանջելուն,  
Արդուինցին լսելուն պէս սկսած էր վախչելուն,  
Էլ ժամանակ չունէին գուռը վակելուն.  
Տէրը ողորմած է, մի վախէք հայեր:  
Հազար իննհարիւր տասնուշորսն էր,  
Նոյեմբեր չորսի երեքաբթի գիշերն էր,  
Ժողովուրդը քնաթաթաղ անկողնումն էր.  
Տէրը ողորմած է, մի վախէք, հայեր:  
Մեծ, փոքր, կին, երեխայ վախչում են,  
Կորձուլու Մարիամ Աստուածածնան աղաչում են,  
Քարերու մէջ ոտը բոքիկ թռչում են.  
Տէրը ողորմած է, մի վախէք, հայեր:

Գողգոթայ սարի վրան Տէրը խաչուած է,  
 Մեզ նման խեղճերին Տէրն ազատած է,  
 Թրբի նման անգութին տունը քանդուած է.  
 Տէրը ողորմած է, մի՛ վախէք, հայեր:  
 Երեք մասը Արդուինումէն վախած են,  
 Քառորդ մասը Կատարինդար հասած են,  
 Շատերը իրենց գաւկները կորցրած են.  
 Տէրը ողորմած է, մի՛ վախէք, հայեր:  
 Հաւատացէք Ռուսաստանի քաջ բազուկին,  
 Արդէն Ռուսաց զօրքն իրզրումի մօտն է,  
 Օսմանցու նման փոքրիկ թզուկին  
 Շուտով կը յաղթենք, մի՛ վախէք, հայեր:  
 Գերմանիայի զօրքը ետ նահանջում է,  
 Աւստրիոյ տէրութիւնը արդէն կորչում է,  
 Օսմանցու բոնապետութիւնը վերջանում է.  
 Իմ ասածին հաւատացէք դուք, հայեր:

---

## Ե Ր Գ Բ

### Ե ՞ ՞ ՞ ՞ ՞

---

Պատերազմը սկսուեցաւ,  
 Զօրքը Սալալէթ բարձրացաւ,  
 Արդուինը ապահովուեցաւ.  
 Էս ինչ օրին հասաք, խեղճեր:

Գիշերը վըսփսոց ինկաւ,  
 Մեծ, փոքրը ոտկի՛րան ելաւ,  
 Կամուրջի ճամբան բռնուեցաւ.  
 Էս ինչ օրին հասաք, խեղճեր:  
 Գեղացի տաճիկները  
 Ժողովուրդին վախեցուցին՝  
 Արդուինը պիտի պաշարին.  
 Էս ինչ օրին հասաք, խեղճեր:  
 Հիւանդներին տուն թողեցին,  
 Մեռածը չի կայ, թաղեցին,  
 Զարդարանքնին հողը թաքցրին.  
 Էս ինչ օրին հասաք, խեղճեր:  
 Քնաթաթաղ խեղճուկները  
 Ոտքը բորբիկ վազեցին,  
 Զաւակները կորմնցուցին.  
 Էս ինչ օրին հասաք, խեղճեր:

Տները բաց թողեցին,  
 Ապրանքը հողին յանձնեցին,  
 Օսմանցոցը անիծեցին.  
 Էս ինչ օրին հասաք, խեղճեր:

Առաւօտ ծագը բացուեցաւ,  
 Փախչողները Կապան շարուեցան,  
 Ճօտիբարը ոտքով անցան.  
 Էս ինչ օրին հասաք, խեղճեր:  
 Երբ որ Սուվէթ բարձրացան  
 Տունը շատ բան մոռացան,

Եստեղ վայնաս սկսուեցան,  
 իս ինչ օրին հասաք, խեղճեր:  
 Մէկը կուլայ ոսկու համար,  
 Միւսն իր դուստրի համար,  
 Փոքրիկները հացի համար.  
 իս ինչ օրին հասաք, խեղճեր:  
 Մի բազմութիւն ժողովը դի  
 Փախչում է, ետ էլ չի նայում,  
 Զօրքը ուտելիքն է այրում.  
 իս ինչ օրին հասաք, խեղճեր:  
 Ապահով է Բաթումը,  
 Պատերազմ է Մուրզուլումը,  
 Մարդ չի մնաց Արդուինումը.  
 իս ինչ օրին հասաք, խեղճեր:  
 Գաւազանը ձեռքը առին  
 Օտարութեան ճանապարհին,  
 Օսմանցի, քու մուխտ մարի.  
 Ամէն, ասացէք, խեղճեր:

---

## Ե Ր Գ Գ

Արդուինում մնացողների ողբալի վիճակը

Ժողովը մի մաս փախաւ Արդուինէն,  
 Ետ մնացողներն ինչ եղան.  
 Հաստատ լուրեր բերող չի կան,  
 Հայրիկ-մայրիկս ինչ եղան:

Առաջ անցնողներն անցան,  
 Ճանապարհին մնացողներն ինչ եղան.  
 Թիւրքաց գիւղերուն մէջ  
 Մնացողներն ինչ եղան:

Յաւալի է փախչողի վիճակը,  
 Ողբալի է ետ մնացողի հեկեկալը.  
 Առանց պաշար ճանապարհի  
 Տունը մնացողներն ինչ եղան:

Սարսափելի լուր է գալիս  
 Թիւրքաց զօրքի արածներէն,  
 Ծեր, երեխայ մորթոտվում են,  
 Եղբայր-քոյրիկս ինչ եղան:

Ճորոխ գետին եղերքները  
 Արնաքամ գիակներ կան,  
 Այս ընողները թուրքերն են,  
 Կինս, աղջիկս ինչ եղան:

Փախչողները տուն-տեղ ունին,  
 Բոլորն էլ ընտանիքով են,  
 Առանց հայրիկ-մայրիկի  
 Մանչս, աղջկաս ինչ եղան:

Արտանուճ էլ հասան, անցան,  
 Շավշէթն էլ մէկտեղ միացան,  
 Արդահանը ոտքով անցան,  
 Տունս տեղերս ինչ եղան:

Արդահանցիք չի կան կեցան,  
 Սախալ-տութանը ձիւնով անցան,

Կարսու խաները լեցուեցան,  
 Երիկ-մարդիկս ի՞նչ եղան:  
 Արդուինում ժողովուրդ մուացին,  
 Թիւրք կադիին մօտ գնացին,  
 Տէր-Կարապետին համոզեցին,  
 Զդիտենք նրանք ի՞նչ եղան:  
 Անյոյսին յոյսին Յիսուսն է,  
 Անձարին ճարը Տէրն է,  
 Համբերեցէք, դուք կը տեսնէք  
 Թուրքիոյ գահը ի՞նչ եղաւ:  
 Ամենքդ մէկ ժողովեցէք,  
 Հօր Աստուծուն աղաչեցէք,  
 Մեր կայսեր ձեռքին ոլժ տայ,  
 Կը տեսնէք օսմանցին ի՞նչ եղաւ:  
 Գիտեմ շտապում էք վերադառնալուն,  
 Ռուսաց զօրքի երգումը պաշարելուն,  
 Փափագում էք այդ լուրերի լսելուն,  
 Վերջապէս կիմանաք որ Թուրքիան վերջացաւ:

---

Ե Ր Գ Դ

Արդուինցու ողբը

---

Օսմանցիի զօրքը մօտ էր Արդուինուն  
 Լաւ գիտենք թուրքերն ի՞նչպէս են անկիրթ.  
 Մէկը հօրն ու մօրը կորցրեց, միւսը՝ որդուն.  
 Լացէք, ողբացէք, ով թշուառ հայեր:

Շատ չարչարանքներով տուն տեղ ունեցան,  
 Հիմա բախտի բերման թողին ու փախան  
 Տեղի տաճիկները օսմանցուն բերան.  
 Լացէք, ողբացէք, ով թշուառ հայեր:

Արդուինցին արհեստաւոր է և աշխատասէք,  
 Զայնը կը գայ Ռուսաստանի խորքերէն,  
 Ամեն մէկը օգնում են հայրենակիցներին.  
 Լացէք, ողբացէք, ով թշուառ հայեր:

Օտարութեան մէջը վաստկած կոպէկնին  
 Հազարաւոր վերատերէն կը գային Արդուին,  
 Մէկը աղջկան կը պսակէք, միւսը իր որդուն.  
 Լացէք, ողբացէք, ով թշուառ հայեր:

Արդուին ժողովուած են Հայաստանի խորքերից,  
 Պատմութիւնը լսած են իրենց պապերից,  
 Օսմանցու պատերազմը տուն-տեղից զրկեց.  
 Լացէք, ողբացէք, ով թշուառ հայեր:

Մեր պապերը թիւրքի լուծը քաշած են,  
 Թիւրքի օրով սիրտ-ջիգարը մաշած են,  
 Հիմա նրա թուները Արդուինումէն գաղթած են.  
 Լացէք, ողբացէք, ով թշուառ հայեր:

Օտարութեան առագաստը քաշուած է,  
 Մի մասը կովկասու անկիւնները թափած է,  
 Միւս մասը Ռուսաստան ցրուած է.  
 Լացէք, ողբացէք, ով թշուառ հայեր:

Արդուինցին իր աշխատանքով ապրում է,  
Հիմա օտարութեան մէջ նահատակվում է,  
Հայ բարերարները շատ տեղ օգնում են.  
Լացէք, ողբացէք, ով թշուառ հայեր:

## Ե Ռ Գ Ե

### «Պանդուխտ Արդուինցին»

Իմ թանկապին հայրենիքից անջատուած եմ առաջժմս,  
Խելագարուած ման եմ գալիս, չգիտեմ ուր եմ  
առայժմս.  
Գիշերները մթութեան մէջ մտածում եմ առաջժմս,  
Ե՞րբ կը լսեմ ազատութեան բարի լուրդ, հայրենիք:  
Օրեր ամիսներ անցնում են, ոչինչ բարի լուր  
չունեմ,  
Տունս-տեղս թող տուած եմ, գիշերելու տեղ  
չունեմ.  
Այս նեղացած օրերուս մէջ միսիթարող մը չունեմ,  
Ե՞րբ կը լսեմ ազատութեան բարի լուրդ, հայրենիք:  
Բարձրացնում եմ թրջուած աչքերս երկնքից բան  
տեղ չի կայ,  
Կորուցել եմ զաւակներս, նրանցից ալ լուր  
չի կայ,

Գիշեր-ցորեկ լաց եմ լինում, հեկեկալուց օգուտ  
չի կայ,  
Ե՞րբ կը լսեմ ազատութեան բարի լուրդ, հայրենիք:

Թոշուններին լուր հարցնում եմ, նրանք սուս-  
փուս անցնում են,  
Լուսինն ալ պարզ չի երևում, ամպերը վրայից  
անցնում են,  
Օտարութեան մէջը, աւաղ, կեանքս մաշուած  
անցնում է.

Ե՞րբ կը լսեմ ազատութեան բարի լուրդ, հայրենիք:  
Ողջ աշխարհը թէ ինձ տային, դարձեալ ես գոհ  
չեմ լինի,  
Իմ ծննդավայր սարը, ձորը ինձ մխիթարանք կը<sup>լինի.</sup>  
Ո՞վ Արդուինս վերագարձնէ, նրան երկար կեանք  
լինի.  
Ե՞րբ կը լսեմ ազատութեան բարի լուրդ, հայրենիք:

Այս գառն վիճակից մեզ ազատիր, Փրկիչ իմ,  
Հայրենիքս վերադառնամ, Դու ինձ օգնիր,  
Փրկիչ իմ.  
Յովիաննէսի աղօթքներուն լսիր, Տէրիմ, Փրկիչ իմ,  
Ե՞րբ կը լսեմ ազատութեան բարի լուրդ, հայրենիք:

Ե Բ Գ Զ

Արդուինցի մօր եւ որդու հառաջանեները

Ո Ր Ռ Ի Ն.

Հայրս, մայրս գնացել են, ինձի այստեղ թողեր են,  
Անչափահաս երեխայ եմ, ո՞մ յոյսով ինձ  
թողեր են,  
Բոլոր ժողովուրդը փախել են, տուն-տեղերը  
թողեր են,  
Երբ կը լսեմ անոյշ ձայնդ, իմ սիրելի մայրիկս:

Մ Ա Յ Ր Ո.

Ով սիրելի իմ զաւակս, ես քեզ ինչպէս կորուցի,  
Գիշերուան մթութեան մէջ շատ բաներ ալ  
կորուցին,  
Զօր ու գիշեր լաց լինելով աչքիս լոյսը կորուցի.  
Երանի էր քո պատկերդ թէ տեսնէի, նրգեակ:

Ո Ր Ռ Ի Ն.

Բոլորտիքս նայում եմ, կանաչ սարեր եմ տես-  
նում,  
Դուրս եմ գալիս փողոցները, թիւրքաց գօրքեր եմ  
տեսնում,  
Ճնճղուկի պէս թրչկոտում եմ, մայրիկ, ես քեզ  
չեմ տեսնում.  
Երբ կը լսեմ անուշ ձայնդ, իմ սիրելի մայրիկս:

Մ Ա Յ Ր Ո.

Իմ սիրասուն որդեակս, ես քեզի չեմ մոռանայ,  
իմ ծննդվայր սարը, ձորը երբէք ես չեմ մոռանայ,  
Հայրենիքիս օղը, ջուրը երբէք ես չեմ մոռանայ.  
Երանի էդ քո պատկերդ թէ տեսնէի, նրգեակ:

Ո Ր Ռ Ի Ն.

Բարձրացնում եմ իմ ձեռքերս, աղաչում եմ առ  
Աստուած,  
իմ ծնողքս վերադարձու օտար երկրից, Տէր  
Աստուած。  
Շատ տանջանքներ մենք բաշեցինք բաւական է,  
ով Աստուած.

Երբ կը լսեմ անուշ ձայնդ, իմ սիրելի մայրիկս:

Մ Ա Յ Ր Ո.

Ով թանկագին իմ էակս, քո անունիդ ես մեռնեմ,  
Քո աննման գէմքը տեսնեմ ամենավերջը մեռնեմ,  
Պանդուխտ երկրիցս շուտ աղատուեմ Արդուինու  
մէջը մեռնեմ.

Երանի էր քո պատկերդ թէ տեսնէի, նրգեակ:

Ո Ր Ռ Ի Ն.

Բաւականի օրեր անցան, ձեզնից լուր մը չեմ  
լսում,  
Գիշեր-ցերեկ լաց լինելով ոչ ոք ձայնս չի  
լսում,

Խելառած եմ ձեր սիրովը, ոչ մի խորհուրդ չեմ  
լսում.  
Ե՞րբ կը լսեմ անուշ ձայնդ, իմ սիրելի մայրիկա:  
Մ ա յ ը ը.

Թափառում եմ քաղքէ քաղաք, ոտք դնելու տեղ  
չունեմ,  
Գիշերուան մթութեան մէջ գլուխ դնելու տեղ  
չունեմ,  
Ոտս բորիկ, գլուխս բաց, վրաս հագնելու շոր  
չունիմ.  
Երանի՛ էր քո պատկերդ թէ տեսնէի, որդեակ:

## Ե Ր Գ Է

Նովորոսիսկի ոմբակոծութիւնը (1914 թ.)

Հոկտեմբերի տասնուշեցին ճիշտ ժամը ութին  
Թիւրքի զրահակիրը մտած էր նաւահանգստին,  
Իւրէրնաթին յայտնած էր Վիլհէլմի միտքը.  
Գիշերները անքուն մնաս դու, Վիլհէլմ:

Երբ որոշուած ժամանակը լրացաւ,  
Թնդանօթի տրաքոցը լսուեցաւ,  
Նովրասիսկի ժողովուրդը ոտքի ելաւ.  
Փախստական լինիս, անօրէն Վիլհէլմ:

Ժողովուրդը սկսած էր փախչելուն,  
Անձրել սկսած է բնակիչին թրջելուն,  
Կերոսինի բակերը սկսած էին տրաքուելուն,  
Կրակի բոցին մէջ մնաս դու, Վիլհէլմ:  
Անապայի ճանապարհով փախչում են,  
Թնդանօթի տրաքոցը լսում են,  
Ժողովուրդը ցեխերի մէջ գլորվում են.  
Խողերու օրումը մնաս դու, Վիլհէլմ:  
Կարդա Աւետարան, գտի՛ր հրաման,  
Աշխարհքի վրայ եղար անօրէն հրաման,  
Անգոյթ Օսմանցուն գտար քեզ նման.  
Ներոնի օրումը ընկնես դու, Վիլհէլմ:  
Աշխատեցար, Օսմանցուն համոզեցի՛ր,  
Եւրոպայի պատերազմում խառնեցիր,  
Պատիժը կը գտնաք դուք էյի, կեցէք.  
Կայենի օրումը ընկնես դու, Վիլհէլմ:  
Զեռդ Աւետարան՝ աղօթքը ըրիր,  
Այդպէս պիղծ սրտով սրբութիւն առիր.  
Մի տաք սրբութիւն այդպէս շներին.  
Յուղայի օրումը ընկնես դու, Վիլհէլմ:  
Վերջապէս քեզ համար չի կայ փրկութիւն,  
Քո դաշնակից թիւրքը չունի զօրութիւն,  
Կովկասու մէջ սկսել տուիր արիւնհեղութիւն.  
Զարչարանքով պիտի սատկես դու, Վիլհէլմ:

# Ե Ր Գ Ը

## Բաթումի ոմքակոծութիւնը

Վերջապէս Բաթումն էլ չի ելաւ հերթից,  
Շովի կողմից տրաքոցներ լսեց Գերէնից,  
Պատասխան ստացաւ Բաթումի բերդից.  
Կործանումդ մօտեցած է, Օ'սմանցի:

Յոյս կապեցիր Աջարուբան խէրուրան,  
Նրանք պիտի յարձակուին Բաթումի վրան,  
Արձակուած գնդակը դիպաւ Դերէնի քթին վրան.  
Կործանումդ մօտեցած է, Օ'սմանցի:

Բաթումի ժողովուրդը շատ վրդովուեցան,  
Կէսը հարաւ, կէսը արևելք փախան,  
Գերէնի փախուստը իրենք ալ տեսան.  
Կործանումդ մօտեցած է, Օ'սմանցի:

Որսորդ կազակները անցան Մուրղուլը,  
Արդահանի զօրքը հասաւ Խարխնումը,  
Մօտ օրերս կը պաշարեն Արդրւինը.  
Կործանումդ մօտեցած է, Օ'սմանցի:

Բաթումը անառիկ բերդեր ունի,  
Պատասխանը կը տայ տառը Դերէնին.  
Օսմանցու, զօրքը մօտ է Բաթումին.  
Կործանումդ մօտեցած է, Օ'սմանցի:

Գիտենք Օսմանցի տկլր զօրքերին,  
Ռուսաց դէմը չեն դիմանար դիրքերում,  
Վրանին յարձակուելուն պէս կսկսին փախչելուն.  
Կործանումդ մօտեցած է, Օ'սմանցի:

Ինչպէս պիտ' որ վերջանայ այս պատերազմը,  
Գուշակութիւն ընողներ շատ կան,  
Արևելեան հարց ասած խօսքերը՝  
Մօտ ժամանակում կը վերջանայ Օսմանցին:

Շատ ազգութիւններու մուխը մարած է,  
Նրանց ազատութեան օրը հասած է,  
Երեքպետեան համաձայնութեան խօսքերով  
Էլ տէրութիւն չես ունենայ, Օ'սմանցի:

39936-67

# Ե Ր Գ Ը

## Արդահանի և օլթեցիների փախուստը

Օր օրի մէջ նոր-նոր լուրեր եմ առնում,  
Օթին, Արդահանը թիւրքերն են վերցնում,  
Սարի-Կամիշի վրայ թիւրքն է յարձակում.  
Էս ինչ նեղ օրին հասաք, արդուինցիք:  
Մի յոյս ունէինք, Էն էլ կտրուեցաւ,  
Արդահանի զօրքը Արդուին չի հասաւ,  
Զեր Արդուին գնալը էլի ուշացաւ.  
Էս ինչ նեղ օրին հասաք արդուինցիք:



Օլթին ու Արդահանը մտած պարումը,  
Առանց ժամանակ կորցնելու անցան կարսումը,  
Ունեցած-չունեցածնին թողին Արդահանումը.  
Էս ինչ նեղ օրին հասաք, արդուինցիք:  
Պատրաստ էիք նոր տարին Արդուին ընելու,  
Բարեկենդանին Արդուին գտնուելու,  
Թող տուած իրերը ձեռք բերելու.  
Էս ինչ նեղ օրին հասաք, արդուինցիք:  
Օլթեցիները լաւ հասկացան վասնգը,  
Օլօրցիները վաղուց կապեցին դէնգը,  
Թիւրքաց զօրքը մօտ է Օլթիի բերդին.  
Էս ինչ նեղ օրին հասաք, արդուինցիք:  
Մեծ չարչարանքով սար ու ձոր անցաք,  
Բոլոր ճանապարհը լած-կոծով անցաք,  
Մեռածները ձիւնի մէջը թաղեցիք:  
Էս ինչ նեղ օրին հասաք, արդուինցիք:  
Մի վհատիք, համբերութիւն ունեցէք,  
Զեր քաշած վնասը ամբողջ կրստանաք,  
Առժամանակ նեղութիւններ քաշեցիք.  
Բոլոր նեղութիւնները կը մոռանաք, արդուինցիք:

### Ե Ր Գ Ժ

Ներկայ պատերազմի սարսափները  
Սուլթանին հետ խօսք կապեցիք ամառ,  
Պատերազմը ոկտոհցիք ձմեռը,

Զէր ծնի, չէր վաստկի քու հէրն ու մէրը.  
Աւուր դատաստանին քաշես դու, Վիլհէլմ:  
Աստուծումէն չես վախենայ դու իսկի,  
Էնվէր վաշին տուիր անհամրանք ոսկի,  
Հայու միսը կերար, արիւնը խմեցիր.  
Աւուր դատաստանին քաշես դու, Վիլհէլմ:  
Չես հաւատար եկեղեցուն, սրբերուն,  
Չի իմայեցիր մանուկներուն, որբերուն,  
Ոչխարի պէս մորթստեցին հայերուն.  
Աւուր դատաստանին քաշես դու, Վիլհէլմ:  
Աստուած կեանք տայ մեր կայսերին իր օրը,  
Մենք էլ յուսացել ենք Աստուծու Մօրը,  
Մեզ դու ձգեցիր անիրաւին թոռը.  
Աւուր դատաստանին քաշես դու, Վիլհէլմ:  
Մի վստահիր, վառքիդ ու գարդարանքիդ,  
Ափսոս քու տիեզերական անունիդ,  
Ներոն կայսեր պէս կըլլաս նէրէզիդ.  
Աւուր դատաստանին քաշես դու, Վիլհէլմ:  
Յովիաննու յայտնութեան մէջ գրուած է՝  
Հաւատացէք՝ նեռ աշխարհք եկած է,  
Մարդկանց դիմակը երկիր փոռած է.  
Աւուր դատաստանին քաշես դու, Վիլհէլմ:  
Մեր Տէրը մեզ համար արիւն թափեց,  
Խաչի՛րան մեռնելով մեզի ազատեց,  
Քեզ նման անգութին տուն-տեղը քանդեց.  
Աւուր դատաստանին քաշես դու, Վիլհէլմ:

Քու մարմինը գերեզմանը չի մտնի,  
 Քու արիւնդ հողը, ջուրը չի պղծի,  
 Քու սատկելով աշխարհք պիտ' որ խաղաղուի,  
 Աւուր գատաստանին քաշես դու, Վիլհէլմ:  
 Վիլհէլմը գերգաստանով փճանայ,  
 Թեթոններու տէրութիւնը վերջանայ,  
 Օսմանցիի կայսրութիւնը կործանուի.  
 Այս հրաշքները թող կատարուին, ու' Վիլհէլմ:  
 Թուսաստանը էլ զօրք չի տայ բանակին,  
 Ֆրանսիան կ'արժանանայ իր նպատակին,  
 Անգլիացոց ասածներն է թանկագին,  
 Նեմցի տէրութիւնն էլ չի լինի, Վիլհէլմ:  
 Աստուած պահէ, Կայսր Նիկոլայ Ալեքսանդրովչին,  
 Տէրը ոյժ տայ իր բաջարի զօրքերին,  
 Ընդհանուր հրամանատար Նիկոլայ Նիկոլայէվչին.  
 Նախորիսնի օրը ընկնես դու, Վիլհէլմ:

### Ե Ր Գ ԺԱ

#### Արտանուճի նահատակները

Թիւրքը վաղուց պատրաստուած էր պատերազ-  
 մելուն,  
 Պոլսից Արտանուճ քարոզիչ ուղարկելուն,  
 Սրբազն պատերազմ գիւղացոց քարոզելուն.  
 Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Գիւղացի թիւրքերը քարոզից խրախուսեցան,  
 Օսմանցու զօրքին տեսնելուն պէս քաջալերուե-  
 ցան,

Արտանուճի վրայ մէկէն յարձակուեցան.  
 Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Արտանուճը շատ մեծ ապագայ ունէր,  
 Եւրոպական ճաշակով լաւ շինուած աներ,  
 Բարձր ուսումնարաններում ունէին սաներ.  
 Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Նոյեմբեր վեցին վատ լուր բերեցին.  
 Օսմանցու զօրքը Արտանուճին տիրեցին,  
 Թիւրք խուժանը տունը-տեղը թալլեցին.  
 Անուննիդ վերջանոյ, օսման-նեմէցներ:

Բերդը մտնելնուն պէս մտան տները,  
 Անխնայ ծեծեցին ծեր, մանուկները,  
 Սկսան որոնել թաքցրած բաները.  
 Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Մեծ-փոքրին լացը, կոծը բարձրացաւ,  
 Անօրէն գաղաններու սիրտը քարացաւ,  
 Ժողովրդին հետ Տէր-Մանուէլը գերուեցաւ.  
 Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Խանութները, տները, ժամը թալլեցին,  
 Պատուաւոր վաճառականները մէկէն գերեցին,

Սրանց աղատութեան փրկանք ուղեցին.  
Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Շատ մարդ սարը մտաւ ճգնաւորի պէս,  
Շատերին մորթոտեցին մարտիրոսի պէս,  
Ժայռից վար խափեցին անպէտք բանի պէս.  
Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Կինարմատներու մէջ լուր տարածեցին՝  
Հարս-աղջիկ փախցնենք ըսելով նրանց լացուցին,  
Պահուած տեղերից մարդկանց հանեցին.  
Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Առաջին սպաննութիւնը Տէր-Մանուէլից սկսեցին,  
Խեղճ ժողովրդի մէջ սարսափ տարածեցին,  
Սուրով չի կայ մորթեցին, գնդակով զարկին.  
Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Էրիկ-մարդկանց կանանց առաջն զարկին,  
Քաշկոտելով ապառաժ քարի գլուխ տարեցին,  
Կենդանի մարդկանց քարից ձորը նետեցին.  
Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Այս ձորին Զեննէմ-դէրէսի անունը կը տան,  
Հիմա նահատակները այնտեղ թաղուեցան,  
Ողջ մնացողներուն ուխտատեղ դարձաւ.  
Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Այս ձորին անունը հիմա փոխեցէք,  
Նահատակաց կղզի անուն դրեցէք,

Գերեզմաններու վրան մատուռ շինեցէք.  
Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Զօրքը չէր անողը, խուժան թիւրքերին  
Ցոյց տուողները տեղի գիւղացի ծանօթներն են,  
Ամեն օր աները գնացող-եկողներն են.  
Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Ինչպէս Արտանուճը քարուքանդ ըրիք,  
Բերլինն ու Պոլիսը մի օրին տեսնենք,  
Այս անգոյթ մարդ-գայլից երբ տի աղատուինք.  
Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Որբեարի կանայք որբ տղաքով մնացին,  
Առանց շորի և անօթի նստան ու լացին,  
Խեղճ երեխէք ցաւալից մօրը գրկեցին.  
Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Այս օրէնքը շինողի ազգը վերջանայ,  
Էն ֆէթվա գրողին ձեռքը չորանայ,  
Շարադրող թկթոնը դռնէ դուռ մուրայ,  
Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Տէր Աստուած, ըսածս մեղք մի համարիր,  
Այս անգոյթ թիւրքին ինչ ստեղծեցիր,  
Անխիղճ անօրինի ձեռքով մեզի տանջեցիր.  
Անուննիդ վերջանայ, օսման-նեմէցներ:

Տէրը պահէ մեր Կայսերին, փառք իրան,  
Աստծոյ օրհնէքն ըլլայ իր քաջարի դօրիքուն,

Թուսաց թուրը ըլլայ կտրած թիւրքի վզերան.  
Անուննիգ վերջանայ, օսման-նէմէցներ:

Մեր Տէրը գերեզմանէն իջաւ Լիմպոսը,  
Կապեալ հոգիներն ուղարկեց սրբերուն դասը,  
Յովիաննէսի աղօթքներուն Տէրը կը լսի.  
Անուննիդ վերջանայ, օսման-նէսէցնիր:

## Ե Ր Գ ԺԲ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Եւրոպայի պատերազմը խօսվում էր,  
Ժողովուրդը զարհուրանքով լսում էր,  
Քառասուն տարի է Գերմանիան պատրաստվում էր.  
Նպատակին չարժանաք, նեմէցներ:

Քամաներորդ դարու առաջին քառորդին  
Սերբերն սպաննեցին Ֆրանց-Ֆէրդինանդին,  
Սերբերին պատժելու ելաւ աւստրիացին.  
Նպատակին չարժանանաք, նեմէցներ:

Ռուսաստանը պատրաստուեց Սերբին օդնելու,  
Պահեստի զօրքերին հրամայեց ժողովելու,  
Աւստրիայի բանակին և լանգնեցնելու.  
Նպատակին չարժանանաք, նեմէցներ:

Գերմանիայի կայզերը հրամաններ արձակեց,  
Իր պատլանիկի ձեռքով պարոն Սաղոնովին լսեցրեց,

Պարոն Սաղոնովի պատասխանը կայզերին խեցրեց.  
Նպատակին չարժանանաք, նեմէցներ:

Առանց սպասելու կայզէրը հրաման արձակեց,  
Ռուսաց դէմը պատերազմ հրատարակեց,  
Ռուսաց սահմանը զօրքեր ուղարկեց.  
Նպատակին չարժանանաք, նեմէցներ:

Պարոն Սաղոնովը կայզրին յայտնեց,  
Զօրքը շուտով ժողուել հրամայեց,  
Գերմանիայի զօրքի դէմ բանակ կանգնեցրեց.  
Նպատակին չարժանանաք, նեմէցներ:

Ռուս ժողովուրդը Կայսերին հետ միացաւ,  
Ժողովք կազմուեցաւ, ճառեր խօսուեցաւ,  
Միացեալ դաշնակցաց հեռագիր խրկուեցաւ.  
Նպատակին չարժանանաք, նեմէցներ:

Դաշնակից տէրութիւնը ետ չի մնացին,  
Պրէսիդէնթ Պուանքարէն մքանսիա գնաց,  
Գերմանը պատերազմ նրանց էլ հրատարակեց.  
Նպատակին չարժանանաք, նեմէցներ:

Նոր ենք մտած քսաներորդ դարումը,  
Ֆրանց-Եօգէֆին դուք կոխեցիք պարումը,  
Օսմանցուն խաւրեցիք Մէհմէդի դրախտումը.  
Նպատակին չարժանանաք, նէմէցներ,

Բելգիայի սահմանը զօրքեր թափեցիք,  
Պաղարիւն Անգլիացուն ուաքի կանգնեցրիք,

Զէզոք բելգիացու առունը քանդեցիք.  
 Նպատակին չարժանանաք, նեմէցներ:  
 Նոր հսարած մորտիրներիդ մէջտեղ հանեցիք,  
 Պարիզ քաղաքի վրայ յարձակուել ուզեցիք,  
 Այնտեղ մեծ պարտութիւններ կրեցիք.  
 Նպատակին չարժանանաք, նեմէցներ:  
 Օդի մէջ թռչելու օթապարիկ բարձրացրիք,  
 Ծովին տակը նաւակներ պարտեցրիք,  
 Անգլիու նաւերը դուք խորտակեցիք.  
 Նպատակին չարժանանաք, նեմէցներ:  
 Բէյմսի սուրբ եկեղեցին աւերակ ըրիք,  
 Աստուածածնայ սուրբ տաճարը քանդեցիք,  
 Պատիժը կը գտնաք դուք, հէլէ կեցէք.  
 Նպատակին չարժանանաք, նեմէցներ:  
 Մեծ ուժերով յարձակեցաք Վարշավի վրայ,  
 Զարդ ու փշոր եղաք Վիսլա գետի՛րայ,  
 Էլ զօրք չունիք ոտք հանելու զէնքի՛րայ.  
 Նպատակին չարժանանաք, նեմէցներ:  
 Աջ ու ձախ պատրաստուած էք կռուելուն,  
 Զօրքին կէսը սկսած էր վիրաւորուիլ, գերուելուն,  
 Էլ յոյսերդ կտրուեցաւ, յաղթութիւնը տանելու.  
 Նպատակին չարժանանաք, նեմէցներ:  
 Աստուած ոյժ տայ Ռուսաստանի զօրքերին,  
 Տէրն յաջողէ դաշնակիցների ջանքերը.  
 Վերջանան նեմէցները ծովի վրայ, չորի՛րայ.  
 Զեր միլիտարիզմից կազատուենք, նեմէցներ:

## Ե Ր Գ. ԺԳ.

### ՀԵՊԱՌՈՒԹԻՒՆ ԹԻւրքաց վրայ

Զարդ ու զարդարանը ծախեցէք,

Շաքար ու ալիւր գնեցէք,

Մեծ թաւայով հալուա շինեցէք.

Սուլթանը սատկեր է, հայեր:

Հայ մարդկանցը աւետեցէք,

Յոյներուն ալ լուր տուեցէք,

Փետատ ու թիեր ժողովեցէք՝

Գերեզման փորեցէք, հայեր:

Վիլհելմին մօտը կանչեցէք,

Ֆրանց-Յօզէֆին հրաւիրեցէք,

Մօլաները կողքը շարեցէք.

Մարդագայլը սատկեր է, հայեր:

Պղնձին մէջ ջուր լեցուցէք,

Կրակի վրայ լաւ եփեցէք,

Մատկած շանը լաւ խաշեցէք՝

Նորից չի ողջանայ, հայեր:

Գերեզմանը խոր փորեցէք,

Աւազ ու ցէմէնթ խառնեցէք՝

Վրան լեցնելու պատրաստեցէք,

Մատկածի վրայ լցէք, հայեր:

Կտաւին մէջ փաթաթեցէք,

Մալաջին մէջ դրեցէք,

Գէօռիսանին մօտը դրեցէք,  
 Զի սխալուէք, յոյներ, հայեր.  
 Սալաջի մի կողմիցը  
 Ֆրանց-Եօղէփին բռնել տուէք,  
 Վիլհէլմն իմամ շինեցէք,  
 Հողը գլխին լցէք, հայեր:  
 Վիլհէլմն նամազ անելումը  
 Ամենքդ եախան բռնեցէք,  
 Դա մեր վար դովլէթն է կերած.  
 Փողերն ուղեցէք, հեյեր:  
 Վրան ցէմէնթով պատ շինեցէք,  
 Մօտը պահապան կանգնեցու ցէք,  
 Վիլհէլմն այդտեղից վռնդեցէք՝  
 Խորթլամիշ չի ըլլայ, հայեր:  
 Հագուեցէք, զարդարուեցէք,  
 Մանչ-աղջիկներ ժողովուեցէք,  
 Ամենքդ մէկ պար բռնեցէք.  
 Զարկամը թաղեցէք, հայեր:  
 Ասկից ետքը ապահով կեցէք,  
 Ընտանեկան կեանքի մէջ  
 Այսպէս դեեր էլ չեն ծնի.  
 Աստուծուց խնդրեցէք, հայեր:  
 Նոր հասկացանք, աղաչանքնիս Աստուծած լսեց,  
 կատարեց,  
 Ռուսաց զօրքի քաջութեամբը մեր բաղձանքը  
 կատարուեց,

Յովիաննիսին աղօթքներուն Աստուծած լսեց,  
 կատարեց.  
 Ե՞րբ կը տեսնեմ շէնընալդ, իմ ծննդավայրը  
 հայրենիք:

## Ե Ր Գ ԺԷ

ԿՈՉ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԿԱՐՈՑԵԱԼՆԵՐԻ

Արդուինը ետ վերուցած են, լսեցէք,  
 Հիմա նրանց պիտոյքները հոգացէք,  
 Առատ ձեռով լումաներնիդ տուեցէք,  
 Գնեցէք երգարանս յօգուտ սովեալի:

Աւետարանին խօսքին պէտք է հետևենք,  
 Սովեալներուն մենք պէտք է կերակրենք,  
 Տկլորներուն հագուստ պէտք է որ հագցնենք,  
 Գնեցէք երգարանս յօգուտ սովեալի:

Եղբայրասիրութիւն, սէր ունեցող մարդը  
 Մեր թշուառներու կիմանայ դարդը,  
 Գթացէք խեղճերին, կստանաք փառքը,  
 Գնեցէք երգարանս յօգուտ հայերի:

Օգոստին անողին Տէրը վարձատէ,  
Կառավարիչ տնտեսի կեանքը երկարցնէ,  
Յովհաննիսի յօրինածին ով որ կլսէ.  
Գնեցէք երգարանս յօգուտ հայերի:

## Ե Ր Գ ԺԴ

Արդուինի ազատութիւնը 1915 թ.

Հայրենիքից լուր առեցի ոռւս վերցրած է Արդուինը,  
Թիւրքաց զօրքը լեղապատար թող տուին Ար-  
դուինը,  
Օսմանցի Փաշան զօրքով թալաներ է Արդուինը.  
Ե՞րբ կը տեսնեմ շէնընալդ, իմ ծննդավայր հայ-  
րենիք:  
Շատ մարդկանց կողոպտած են, տուն-տեղերը  
թալլած են,  
Զմեռուան համար պատրաստուած հացը, իւղը  
թալնած են,  
Ոչ ոքի մօտ փող չեն թողած, կանանց զարդն  
ալ թալնած են.  
Ե՞րբ կը լսեմ շէնընալդ, իմ ծննդավայր հայրենիք:  
Քանիմ, մարդկանց դատարանով, կախաղանով  
պատժած են,  
Շատերուն ալ գնդակներով՝ համազարկ են տուած՝  
պատժած են,

Տեղացի թիւրքերու խօսքով այդ մարդկանցը  
պատժած են.  
Ե՞րբ կը տեսնեմ շէնընալդ, իմ ծննդավայր հայ-  
րենիք:  
Քանիմ մարդկանց գերի տարան, էզրումիցը  
լուր եկաւ,  
Փրկանքի համար խօսք դուս ելաւ, էնվէր փաշին  
դուր եկաւ,  
Անգոյթ Օսմանցոց հախիցը Ռուսաց զօրքը լաւ  
եկաւ.  
Ե՞րբ կը տեսնեմ շէնընալդ, իմ ծննդավայր հայ-  
րենիք:  
Ամբողջ Սրդուին սարսափին մէջ դու ձգեցիր,  
օսմանցի,  
Հարիւր երեսուն օր կիսակենդան մեզ պահե-  
ցիր, օսմանցի.  
Ի՞նչ կուզէիր խեղճ մարդկանցէն, սպանեցիր,  
օսմանցի.  
Ե՞րբ կը տեսնեմ շէնընալդ, իմ ծննդավայր հայ-  
րենիք:  
Տանձուի մէջ մարդ չի թողիք, ապառաժից վար  
թափեցիր,  
Սաթլիլու մէջ Հայ չի թողիք, աղիքները դուս  
թափեցիք,  
Արտանուճը կոտորեցիք, Արդուին կըակ թափե-  
ցիք.  
Ե՞րբ կը տեսնեմ շէնընալդ, իմ ծննդավայր հայ-  
րենիք:

Տէր-Կարապետի պէս քաջ հովիւի կեանքը երկար  
լինի,  
Զի թող տուեց իր հօտերուն գայլերուն պաշար  
լինին,  
Գիշեր-ցորեկ աշխատեցաւ՝ ընթհանուր կոտորած  
չի լինի.  
Ե՞րբ կը տեսնեմ շէնընալդ, իմ ծննդավայր հայ-  
րենիք:  
Փառք Աստուծոյ, ամքող՝ Արդուին ազատուած  
է թիւրքիցը,  
Անվաս են տուն-տեղերը, չէր յուսացուի  
թիւրքիցը,  
Ուուաց զօրքը թնդանօթներ վերուցած են  
թիւրքիցը.  
Ե՞րբ կը տեսնեմ շէնընալդ, իմ ծննդավայր հայ-  
րենիք:



ՀՀ Ազգային գրադարան



NL0357158

73 148

401  
801

H 2-50882

ԳԻՆՆԵ 20 ԿՈՊԵԿ